

ՄԵԾ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՆԵՐԸ

ՕՆՕՌԷ ՏՕՄԻԷ

Մօտ տարիէ մը ի վեր Փարիզի մէջ ֆրանսական մ'առարականութիւնը՝ կառավարութեան մ'առարկելութեամբ՝ մեծաշուք հանգիստութիւններով կը ածնէ անցեալ դարու սովորութիւն շրջանի մեծ գրողէաներուն, խորհողներուն, գիտնականներուն, արուեստագէտներուն հարկւրամեայ կամ յիսնամեայ սարգարծը: Առնց կարգին քանի մը ամիս ամիս առաջ ածնուեցաւ Ալիսնամեակը Օսոնէ Տօմիէի մահուան (որ տեղի ունեցած է 1879ին):

Տօմիէ, ծնած Մարտի 1808ին, ֆրանսական նոր արուեստի հսկաներէն մին է: Իր կենդանութեանը քանի մը մեծ մտքերէ միայն հասկցուած, ընդհանրապէս նկատուած էր իբր հասարակ ծաղրանկարիչ մը, և շատեր նոյն խոյ իբր ծաղրանկարիչ զինքը վար կը գտնէին միջակ գծագրիչ Chamեն: Իր գրելէ բովանդակ կեանքը անցուցած է նեղութեան մէջ, անընդհատ աւ հաղձեալով լրացիւններու « ծաղրանկարներ » հապնելու ստիպուած՝ աղբուսար քիչ շատ աղարհուկելու համար: Եւ սակայն այնքան մեծ էր իր հանճարը, որ այդ ծաղրանկար կարծուած էջերն ալ այսօր կը նկատ-

ուին բարձր արուեստի գործեր, հոգեբան գիտողի, մը գիւցաղնաշունչ երգիծաբանի մը, իմաստասէր վիպասանի մը տեսիլները կեանքի, եւ ասոնցմէ զատ ան արտագրած է, պարտադր ժամերուն մէջ, իր հաճոյքին համար, իր բուն կոչումն իրագործե-

լու անդիմադրելի պէտքէն մ'զուած, ոչ միայն փարագրանկարներ՝ թէ՛ օրուան ուշագրաւ անձերու և գէմքերու նուիրւած և թէ՛ մանուսկը Մուլիէրի, Լաֆօնթէնի, Սերվանթէսի ստեղծած մեծ ախարները նկարչականօրէն հոյակապ գործութեամբ մեկնաբանող, այլ և շարք մը իւզաների նկարներ, որ իր առենքս եւ է արժէքէ զուրկ կը կարծուէին եւ այժմ՝ ժամանակակից նկարչութեան գլուխ գործնչներու կարգը կը գտաւին (ասոնց հզօրագոյններէն մէկ քանին



ՏՕՄԻԷ. — ՀԱՆՐԻ ՄՕՆԻԷ

Լուվրի մուսէանին մէջ իրենց տեղը գրաւած են արդէն): Զինքը հասկցող սակաւաթիւ ժամանակակիցներն եղած են Պալլաք, Պոպլէս, Տըլաքուա, Միշլէ և Քօրօ: «Այդ մտքը, կ'ըսէր Պալլաք, մ'որթին տակ Միքել-Անճելոյական բան մը տնի»։ Պոպլէս զայն «ոչ միայն ծաղրանկարի, այլ արդիական արուեստի սովենէն կա-



ՏՈՒԻԷ. — «ՄԻ՛ ԳՊԶԻՔ ԱՏՈՐ»

բեւոր մարդացման մին» հաշտված էր: Տը-
լաբուռ աշխարհն էր յարգէր զայն իբր
իր խառնուածքին մօտի՛լ՝ հզօր եւ ինքնա-
տիպ արուեստագէտ, որ անոր գործերէն
մէկ քանին ընդօրինա՛ւելու մէջ հաճոյք
զգացած էր: Միշէ անոր կը գրէր խան-
դաւան աբանջացման նամակ մը, ուր
կ'ըսէր՝ «կան որ տխրեալի են, գուք էք
միայն որ կուտ մէջք ունիք»: Այս բարձր
գնահատումները տիրող ընդհանուր արհա-
մարհանքն կարծիքը չկրցան
բարեխոսել, Տօմիէ իր ծերու-
թեան օրերն անցուց խորին
թշուառութեան մէջ, վախ-
տահնահինգ տարեկան, աչքերը
կուրացած՝ անընդհատական
ճայրայեղ աշխատութենէն, յե-
տին չբաւորութեան մէջ ին-
կած, ճամբու գրուեցաւ իր
տանտիրոջմէն՝ վարձքը վճա-
րելու անկարող ըլլալուն, եւ
փողոցը սկստի մնար, եթէ Քօ-
րօ մեծ նկարիչը, որ բարե-
տիրա մարդ էր եւ Միյէին
ալ լաշխօրէն օգնած է, անոր
չնսիրէր իլ-Ատանի մօտ վալ-
մօնատաշի մէջ իր ունեցած
մէկ անակը, եւ հոն է որ Տօ-
միէ մահաւ: Երբ մահուանէն

յետոյ իմացուեցաւ որ
թաղումը սկստի կատար-
ուէր կառավարութեան
ծախքով, քանի մը լրա-
գիրներ բազմեցին. «Գալ-
թակդութիւն մ'ըն է տ-
սիկա, կը գրէր Լ. Զրան-
սէ օրաթերթը, անընդու-
նելի գանեղով որ սարգ
ճաղբանկարիչի մը թա-
ղումը սողին ծախքովն
ըլլար»: Մեծ չեղաւ այդ
ծախքը. կառավարութիւ-
նը երեքական ֆրանք
յառկացուցած էր իր
անակէն մինչեւ մօտա-

կայ գերեզմանատունը անոր մարմինը
փախադրող մարդաց, եւ չորս հոգի էին
անոնք, — միայն չորս հոգի, այդ ար-
տա՛ւարդ արուեստագէտին մեռելաթաղ-
ներն ու յուղարկուորները...

Աւանիսի ներկայ թիւով կը հրատա-
րակենք վարդեալին ամէնէն նշանաւոր
գործերէն չորսին վերարտադրութիւնը.
Ա. Մի գպչիմ առն մամուլը ներկայա-
յնող հուժկու տղազրիչմը, որմէ կը ստիան



ՏՈՒԻԷ. — ԳԵՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԵՆ ՅԵՏՈՅ

բոլոր իշխանութիւնները, մամ-
լոյ ապաստութիւնը սեղմե-
լա ձգտող կատարական
որոշմանց գէմ իբր բոլոր
գծումս եւ հրատարակում),
Թբաթանօսկէն փողոց, 1834, (1834ի
յեղախախտութեան միջոցին)
խաղող անդէն խեղճ ընտանի-
քի մը կտարածը Թբաթանօ-
սկէն փողոցի մէկ տան մէջ),
Գ. Հանրի Մօսկէ (ժողէֆ Փրիւ-
սովի գերի Գ. մէջ), Գասափա-
րութեան վերջանալէն յետոյ գա-
տարանի ու փաստաբանի ախ-
պարներու իր հզօր շարքէն
էջ մը):



ՏՈՒՐԷ. — ԹԲԱՆՍԵՆՈՆԷՆ ՓՈՂՈՅ. 1834

ԴՐԱԽՏԱԲՆԱԿԻ ՄԸ

Դուն ամէն ի՛նչ էիք ինձ, սէ՛ր,
Որուն հոգիս կը բաղձար.
Դալար կղզի ծովուն մէջ, սէ՛ր,
Ազրիւր ինչպէս ե տամար,
Պարիկներու պողոտ, ծաղկով ամբողջովին
պրտակուած,
Եւ այդ բոլոր ծաղիկներն ալ ի՛մս էին:

Փայլո՛ւն երագ ու չէր կրնար շատ տեւ,
Յոյս անողալից ու բարձրացար,
Ափսո՛ս, մարելու համար:
Ապագայէն ձայն մ'իմ, հեռուն, կը գոչէ՝
«Յառա՛ջ, յառա՛ջ», բայց հոգիս,
Անցնալին վրայ. վիհ անորոշ. թխրփելով
կը հանգչի.
Համը, աներբ, մահատիւ:

Որովհետեւ, եղո՛ւկ, եղո՛ւկ, ինձ համար
Կեանքի լոյսը ոչ եւ է.
Այլեւ երբե՛ք — երբե՛ք — երբե՛ք —
(Այս բարբառով կը խօսի ծովն հանդիսաւոր
իւր եզերքի առաջներուն.)
Կայծակնաւոր ծառը պիտի չըծաղկի,
Ոչ ալ արծի՛ւր դիտապատ՝ սառանի:

Բոլոր օրերս գտանցանք եւ,
Իսկ երազներս գիշերուան
Այն տեղ եւն ուր գորշ աչքերդ կը նային
Ու քայլերդ կը փայլին. —
Ի՛նչ պարերու մէջ երկրային,
Ի՛նչ ջութերու Բով յաւերժական:
ԷՏԿԱՐ ՓՈ Թարգմ. ՅԱԿՈԲ ԱՆՏՈՆԵԱՆ